

Տևողությունը – 150 րոպե

11. Ֆուտբոլային թիմի 11 խաղացողների միջին տարիքը կազմում է 22: Երբ խաղացողներից մեկին հեռացրին դաշտից, մնացած խաղացողների միջին տարիքը դարձավ 21: Քանի՞ տարեկան է դաշտից հեռացված ֆուտբոլիստը:

- 1) 24 2) 26 3) 30 4) 32

12. 34; 18; 10; 6; ... թվերը գրված են որոշակի օրինաչափությամբ: Գտնել 6-ից հետո գրված թիվը:

- 1) 2 2) 0 3) 3 4) 4


13. Երեք ներկարար 5 օրում կարող են 60 պատուհան ներկել: Քանի՞ օրում երկու ներկարար կներկեն 48 պատուհան:

- 1) 8 2) 5 3) 6 4) 4

14. Տուփում կա 8 կարմիր, 10 կանաչ և 7 սպիտակ մատիտ: Առանց նայելու ամենաքիչը քանի՞ մատիտ պետք է հանել տուփից, որ նրանց մեջ լինի ամեն գույնից գոնե 2 մատիտ:

- 1) 6 2) 19 3) 17 4) 20

15. 1-ից մինչև 6 բնական թվերը տեղադրել են շրջանակների մեջ այնպես, որ եռանկյան յուրաքանչյուր կողմի վրա գտնվող թվերի գումարը հավասար է 10-ի: Գտնել եռանկյան գագաթներում գրված թվերի գումարը:



- 1) 8 2) 9 3) 7 4) 12

16. Ո՞ր թվով պետք է փոխարինել աստղանիշը, որ ստացվի ճիշտ հավասարություն.
 $187-156:(252:\ast-5)=175$:

17. 90 և 100 թվերն ինչ-որ թվի բաժանելիս համապատասխանաբար ստացվում են 18 և 4 մնացորդներ: Ի՞նչ թվի են բաժանել:

18. Շենքի բնակարանները 1-ից սկսած հերթականությամբ համարակալելիս օգտագործվել է 50 հատ 1 թվանշան: Քանի՞ բնակարան ունի շենքը:

19. Սլաքավոր ժամացույցը օրվա մեջ 15 րոպե հետ է ընկնում: Քանի՞ օրը մեկ այն ճիշտ ժամ ցույց կտա:

20. Թվի առաջին թվանշանը 9 է: Եթե այդ թվանշանը տեղափոխեն թվի վեջը, ապա կստանանք սկզբնական թվից 4 անգամ փոքր թիվ: Գտեք այդ հատկությանն օժտված ամենափոքր թվի թվանշանների գումարը: